## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԻԶՄԻՐ, 5/18 Յուն. 1901

Տ.

Մեր ողբացեալ ամուսնոյն և հօր գառն կորստեան առթիւ պատիւ ունինք ծանուցանելու Ձեզ որ ինչպէս Արևելեան Մամլոյ խմբագրական պաշտօնը, նոյնպէս և տպարանական ու գրատան գործերն ըստ առաջնոյն պիտի շարունակուին՝

**Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ ՈՐԴԻ**

անուամբ և որոց պատասխանատուութիւնը և անօրէնութիւնը ստանձնած է Պ. Հրանտ Մ. Մամուրեան որուն ստորագրութիւնը ստորև. Ձեր ուշադրութեանը կը յանձնենք. կը սիրենք յուսալ որ պիտի հաճիք ըստ առաջնոյն պատուել մեր հաստատութիւնը Ձեր վստահութեամբ։

Ընդունեցէք, Տ... մեր յարգանաց հաւաստին։

ԱՅՐԻ ՄԱՐԻԱՄ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
ՀՐԱՆՏ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀՐԱՆՏ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ պիտի ստորագրէ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ ՈՐԴԻ

## ՓՈՔՐԻԿ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատմութիւնն ու գիտութիւնը կ'ըսեն մեզի թէ՝

1.— Ատլանտեան ովկիանոսի խորութիւնը, միջին հաշուով, 4,600 մէթր է. խաղաղականինը՝ 5,000։

2.— Անցեալ դարու սկիզբէն մինչև վերջը՝ Աշխարհի վրայ 386 պատերազմ եղած է. եթէ մանր մունր կռիւներն ալ հետը հաշուենք, ամենը կ'ըլլայ 8,109 որ ըսել է տարին 81 պատերազմ եղած է միջին հաշուով, և մէկուկէս պատերազմ շաբաթը։

3.— 1800ին անգղիական զաւաքանները 50,000 զատ տեսածեն. Թագուհիին գահակալութեան տարին՝ 21,000. և 1900ին միմիայն 10,000.

4.— Ֆրանսա, տարին 38 միլիոն ֆրանք կը ծախսէ իր աղքատներուն համար։ Մինչդեռ անգղիան— 200 միլիոնէն աւելի։

5.— Անգլիեան կղզիները, անպատճառ գոնէ 21 տարին անգամ մը Նիկլոնի պիտի հանդիպին։

6.— Աշխարհիս վրայ հիմա 2 միլիոն հազարամէթր հեռագրաթել կայ։

7.— Գետնախնձորը առաջին անգամ ըլլալով, 1775ին սերմանուեցաւ Սկովտիոյ մէջ. իսկ սերմանողը մեռաւ 1850ին։

8.— Մէկ տարուան մէջ Գերմաներէն լեզուով 1 միլիար 200 միլիոն նամակ կը փոխանակուի, Անգլիերէնով 8 միլիար, մինչդեռ Ֆրանսերէն միմիայն մէկ միլիառ։

9.— Աւստրալիոյ մէջ 600 միլիոն հեքթար անմշակ հող կայ, իսկ Ամերիկայի մէջ 825 միլիոն։

10.— Լոնտոն տարեկան իր աղքատներուն մարդ գլուխ մօտաւորապէս 250 ֆրանք կը վճարէ. Բարիզ— 40 ֆրանք։

11.— Հիւդեհի տուած փասները, ամեն տարի, մէկ միլիար 800 միլիոն ֆրանքի կը հաշուուի։

12.— Անգլիա 1,600 շոգենաւ ունի, 1,000 թօնօէ աւելի տարողութիւն ունեցող։ Գերմանիա 127, միացեալ Նահանգները 920, և Ֆրանսան՝ 60։

13.— Ամբողջ Աշխարհին մէկ տարուան շաքարի արտադրութիւնն է 2 միլիար 400 միլիոն թօնօ։

14.— Կովի ամենէն բարձր գինը եղած է 30,000 ֆրանք։


## ԿՈՒԶԷ՞Ք ԲԱՂԴԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք Ժողովրդական Տարեցոյցէն հատ մը, ուր շատ մը զուարճալի և օգտակար հատուածներու հետ կը գտնուի նաև գեղեցիկ բաղդացոյց մը պէտք եղած բացատրութեամբ։

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց գնել փափաքողք թո՛ղ հաճին դիմել առ Տ. Օհան Խնտամեան, որ պատրաստ է ուրիշ ամէն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնք փութով կատարել փոքրիկ կանխավճարով մը։

Շրջակայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար դրամի տեղ թըղթադրոշմ կընդունուի։

Տարեցոյցին գինը 10 Ղրշ. ողջ
Պարզ օրացոյցինը 2 „


## ԱԶԴ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու դիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապտ–էլ–Ազիզի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գլոթ–Պէյ փողոցի ծայրը և Թըրամվէյներու կայարանին մօտ ծխավաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ քով։


## ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի համրածանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսօյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ։

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութենէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ դրամական և Քաէտի Ֆօնսիյէի, Վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ։ Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ առենէն, պտղեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած։

Փափաքողները հաճին դիմել Նիւպառի վրայ փատտաբան Ռաբթաքիի գրասենեակը։

Թղթակցութիւն և կամ դրամ ղրկել հետևեալ հասցէին։

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ



## ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Պ. ՆԻԿՈԴԻՄՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ սը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դատիկոնը։

Կը բժշկէ բերնի և ակռայի ամեն տեսակ հիւանդութիւնները։ Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9։



## ՊԷԼԱԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ
ԱՐԱՆՑՔԻ ՏԻԿՆԱՆՑ
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապտինի մեծ պողոտային վրայ Տայիրայի Սանիյէի դիմացը, նախկին ելեկտրական գործիներու վաճառատունը։

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՝ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն։

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձևագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին։



## ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապահ
Նիւու-Ցնիվերսէլ դեղարանին դիմացը.

Օդասուն ու զուարճալի դիրք. մաքուր ու վայելուչ սպաս. համեղ և անընդհատ կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. նոյն ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով. ահա՛ Գազանճեան եղբարց ճաշարանը։

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ միշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին։



Le Gérant J. MUNIER

Տպա. «Միութիւն». — Թ. Ս. Փափազեանի



## ՏՊԱՐԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազդեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակագլուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.։

Ցանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով եւ ճաշակաւոր տպագրութեամբ:

ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ